Մ-39

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵՀՄԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ՍԱՐՏՈՅԱՆ

# «ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԵՍ ԻՐԱՆԻ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Խորին հարգանքով և երախտագիտությամբ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա.Հ. Հովհաննիսյանին

ԵՐԵՎԱՆ-2007

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Մ. Կ. Զուլալյան
պատմական գիտությունների թեկնածու
Ք. Պ. Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2007թ. դեկտեմբերի 6-ին, ժամը $15^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.դ. Պ. Չոբանյան

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## 1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի հազարամյակներ ընդգրկող պատմության մեջ ուշ միջնադարը և, մասնավորապես, 17-18-րդ դարերը հանդիսանում են առավել բուռն իրադարձություններով հագեցած ժամանակաշրջաններից մեկը, որը նշանավորվեց նոր հիմքերի վրա զարգացում ապրող աշխարհատարածքային ռազմա-քաղաքական անցուդարձերով, Եվրոպա-Արևելք քաղաքական, տնտեսական հարաբերությունների վերաիմաստավորումներով:

Պատմագիտական ոլորտում այս ժամանակաշրջանին են նվիրվել բազմաթիվ ու բազմաբնույթ գիտական հիմնարար ուսումնասիրություններ, որոնցում արծարծվել են Իրանի տվյալ ժամանակահատվածին վերաբերող պատմական, քաղաքական, տնտեսական, հասարակական, կրոնական, մշակութային և այլ իրողություններ: Դրանց թվում քննարկման մասնակի խնդիրներից է եղել և եվրոպական (կաթոլիկ) աշխարհի, մասնավորապես, Հռոմի ու Իրանի միջև իրականացվող փոխառնչությունների ոլորտի բացահայտման հիմնահարցը:

17-18-րդ դարերում կաթոլիկ տարբեր առաքելությունների (Դոմինիկյաններ, Ավգուստինյաններ (Օգոստոսյաններ), Ճիզվիտներ (Հիսուսյաններ) և այլն) ակտիվ այցերն ու հիմնավորումն Իրանում և նրանց կողմից իրականացվող «աշխատանքները» նպատակաուղղված էին նպաստելու Սեֆյան պետության եվրոպամետ քաղաքականության կողմնորոշմանը: Այդ դեպքում շահական կառավարությունը ստանում էր Եվրոպայի և Հռոմի աջակցությունը թուրքական ռազմական վտանգի դեմ: Կաթոլիկ քարոզչական առաքելությունների կողմից տարվող գործընթացի առավել ակտիվ ջատագովներից էին հատկապես Կարմելյան միաբանները, որոնց վարած «քաղաքականության» հիմքում դրված առաջնահերթ խնդիրն Իրանում կաթոլիկության տարածումն էր: Դրա հետևանքով իրանահայ համայնքում կթուլանար լուսավորչական եկեղեցու դիրքը, կամրապնդվեր մեծահարուստ հայ խոջաների եվրոպամետ կողմնորոշումը, իսկ նրանց ձեռքերում կենտրոնացած հզոր դրամա-ապրանքաշրջանառությունը կուղղորդվեր դեպի Եվրոպա: Այս հենքի վրա որոշակի հնչեղություն է ստանում

**««Կարմելյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմության աղբյուր»** ատենախոսական թեզը, որը փորձ է հնարավորինս առավել ամփոփ ներկայացնելու 17-18-րդ դարերում պատմա-քաղաքական, տնտեսական նոր ձևավորումներով հանդես եկող կաթոլիկ առաքելությունների և նրանց շարքում հատկապես Կարմելյանների գործունեության բուն պատճառները, գործընթացն ու նրանց ակտիվ գործավարույթների հեռահար նպատակներն ու հետևանքները: Գաղտնիք չէ, որ քարոզիչների գործունեությունը որոշակի ազդեցություն է ունեցել ոչ միայն ժամանակի Իրանի արտաքին և ներքին համակարգման վրա, այլև ընդգրկել է իրանական միջավայրում գոյատևող և գործող ազգային տարբեր փոքրամասնությունների, հատկապես, հայկական տարրը: Առաջադրված խնդրի ուսումնասիրության համար հիմնավոր տեղեկություններ են պարունակում Կարմելյանների գործունեությանը վերաբերող օրագրային գրառումները, Վատիկան ուղղված նամակ-հաշվետվություններն ու վերլուծական դիտարկումները և այլ փաստագրումներ: Նրանց համալրումը աղբյուրագիտական հարակից տեղեկություններով և մասնագիտական քննարկումներով հնարավորություն են ընձեռնում վերագնահատելու 17-18-րդ դարերի Իրանի պատմագրության դեռևս լիարժեք չլուսաբանված հարցադրումներ, ինչպես և նորովի անդրադառնալու շրջանառվող որոշ տեսակետների, որոնք կարող են մեծապես նպաստել նաև հայ ժողովրդի պատմության այս ժամանակահատվածի ուսումնասիրության համալրմանը:

## 2. *ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

««Կարմելյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմության աղբյուր» ատենախոսական թեզն, ըստ էության, աղբյուրագիտական-քննական հետազոտության փորձ է, որի համար հիմնաղբյուր է ծառայել «A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939» (Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում) 1939թ. Լոնդոնում հրատարակված փաստաթղթերի երկհատոր ժողովածուն, որում տեղ գտած փաստագրական նյութը ենթարկվել է որոշակի պատմագիտական



համադրության և վերլուծության: Այդ հիմքի վրա փորձ է արվել հանգել եզրակացությունների՝ հիմնվելով ստորև ներկայացվող հարցադրումների բացահայտման կարևորության հանգամանքի վրա.

ա) 17-18-րդ դարերում Իրանի նկատմամբ եվրոպական պետությունների, մասնավորապես, Վատիկանի հեռահար քաղաքական ու տնտեսական նկրտումների դրդապատճառները.

բ) Կաթոլիկ եկեղեցու կողմից 17-18-րդ դարերում առավել խրախուսվող տարբեր առաքելությունների (միսիաների) ակտիվ ներթափանցման ուղիներն իրանական և, մասնավորապես, հայկական միջավայր.

գ) Իրանում Կարմելյան միաբանների հիմնավորման նախապայմաններն ու շահական արքունիքի հետ ձևավորվող հարաբերությունների գործընթացը.

դ) Կարմելյան միաբանության առաջնային դերակատարումը եվրոպական իշխանատիրության ու կապիտալի՝ Իրան ներթափանցման գործընթացում և Վատիկանի երկդիմի քաղաքականությունը.

ե) Իրանում Կարմելյան միաբանների գործավարույթներն իրանահայ (մասնավորապես խոշորագույն գաղթօջախ՝ Նոր Ջուղա) միջավայրում.

զ) Վատիկանի բարձր հովանավորությամբ գործող Կարմելյան միաբանների գործունեության ձախողման ու անկման պատճառները և այլն:

## 3. *ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ*

Ուսումնասիրության գիտական նորույթն ատենախոսության մեջ արծարծվող փաստագրական նյութն է, և այդ հենքի վրա ձևավորվող հարցադրումների գիտա-վերլուծական անդրադարձը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչ այժմ գիտական շրջանառության մեջ գտնվող հարցին առնչվող ուսումնասիրություններն առավել ընդհանրական բնույթի են և վերաբերում են Իրան-Եվրոպա առնչություններին՝ ներկայացվող ատենախոսական թեզը փորձ է առաջնային շեշտադրման ենթարկել հայկական իրողություններին առնչվող հարցադրումները, որոնք կարող են քննարկվել միմիայն Իրանի 17-18-րդ դարերի պատմության ուսումնասիրության ենթատեքստում:

## 4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության համար ընտրված ժամանակաշրջանը (17-18-րդ դարեր) պայմանավորված է համաշխարհային ասպարեզում նոր պատմա-քաղաքական իրողությունների ի հայտ գալով, թուրք-իրանական ռազմա-քաղաքական առճակատմամբ, տարածաշրջանային քաղաքական և տնտեսական գերիշխանության հաստատման համար մղվող պայքարի սրմամբ: Եվրոպական պետություններն առաջնային տեղերից մեկը հատկացնում էին կաթոլիկ տարբեր առաքելությունների կողմից իրականացվող աշխատանքներին, որոնց թվում առավել առաջատար դիրքը ստանձնեց Իրանում հաստատված Կարմելյան միաբանությունը:

## 5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված է Իրանում 17-18-րդ դարերում Կարմելյանների գործունեության քննական մեկնությունը՝ համեմատական-համադրական մոտեցման և աղբյուրագիտական վերլուծության սկզբունքների հիման վրա:

## 6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ ներկայացված դրույթները կարող են օգտագործվել Իրանի՝ 17-18-րդ դարերի պատմության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններում, ինչպես և բուհական համակարգում հայ ժողովրդի ուշ միջնադարի պատմությանը նվիրված մասնագիտական դասախոսություններում: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել պատմաբանների, արևելագետների, հայագետների, միջազգայնագետների և հարակից բնագավառներով զբաղվող այլ մասնագետների համար:



## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը մասնագիտական բազմակողմանի քննարկում է անցել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանագիտության բաժնում և ստացել է նույն ինստիտուտի գիտական խորհրդին պաշտպանության համար ներկայացնելու միջնորդություն:

Սույն ատենախոսության առանցքային դրույթները հրատարակվել են գիտական հոդվածների տեսքով և ՀՀ ԳԱԱ ԱԻ-ում կազմակերպվող Երիտասարդ արևելագետների հանրապետական XXV, XXVI, XXVII գիտական նստաշրջանների հրապարակումներում (ցանկը տե՛ս սեղմագրի վերջում):

## 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ արծարծված հարցադրումների և հիմնախնդրի ներկայացման համար որպես հիմնաղբյուր ուսումնասիրվել է «Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» վավերաթղթերի և նամակների ժողովածուն[1]:

---

[1] **A Chronicle of the Carmelites** in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, II, London, 1939.

«Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» անանուն հեղինակի աշխատությունը բաղկացած է չորս մասից: Առաջին մասում հեղինակը ներկայացնում է ներածական պատմական ակնարկ մինչև 1585թ., անդրադառնալով Կարմելյանների ծագման, զարգացման պատմությանը, իրանական առաքելության նախապատրաստմանն ու իրականացմանը, տարբեր առաքելությունների հաստատմանն Իրանում, թուրքական սպառնալիքին, քրիստոնյա ինքնիշխանների միավորմանն ընդդեմ Օսմանյան Թուրքիայի և այլն:

Հարկ է սկզբից նեթ նշել, որ աշխատությունում ժամանակագրական կարգը պահպանված չէ, բացառությամբ առանձին դեպքերի, սակայն նյութերի մեծ մասը խմբավորված է: Օրինակ՝ առաջին մասում առանձին վերնագրեր նվիրված են Սեֆյան շահերի գահակալություններին (շահ Աբբաս Ա-ի, շահ Սաֆիի, շահ Աբբաս Բ-ի, շահ Սուլեյմանի և այլն): Բացի նմանատիպ մասնակի համակարգումից, աշխատության մեջ կարելի է հանդիպել նաև որոշակի հարցին նվիրված գլխում այդ հարցին չառնչվող փաստերի: Նկատելի է նաև այն հանգամանքը, որ միևնույն խնդրին վերաբերող փաստերն սփռված են գրեթե ողջ աշխատությունում: Աշխատության երկրորդ մասում հեղինակն անդրադառնում է դեպի Իրան և Հնդկաստան կատարված առաքելությունների ղեկավարմանն ու ֆինանսավորմանը: Երրորդ մասը վերաբերում է 1600-1775թթ. Իրանում հաստատված և գործունեություն ծավալած Կարմելյան կրոնավորների կենսագրական գրառումներին, իսկ աշխատության վերջին՝ չորրորդ մասում,

Այս հիմնանյութի համալրումը եվրոպացի ուղեգիրների գրառումներում տեղ գտած հիշատակություններով[1] և կաթոլիկ քարոզիչներին առնչվող՝ Իրանի արքունական հրովարտակներով[2], առավել ամբողջական են ներկայացնում ուսումնասիրության առարկա հանդիսացող նյութը:

Սինոյն ժամանակ Հայաստանում, ինչպես նաև՝ Իրանում կաթոլիկ քարոզիչների գործունեության ուսումնասիրության համար առավել հարուստ տեղեկություններ պարունակող աղբյուրների թվում են ժամանակագիր Առաքել Դավրիժեցու (1595-1669) «Պատմությունը[3]», Գ. Դարանաղցու, Խաչատուր Ջուղայեցու աշխատությունները[4], Սիմեոն Երևանցու[1], Ղ. Ալիշանի[2] և Մ. Օրմանյանի[3] հայագիտական բարձրարժեք ուսումնասիրությունները, որոնք հիրավի կարևորագույն աղբյուրագիտական նշանակություն ունեցող աշխատություններ են:

Կաթոլիկ աշխարհ-Իրան-հայեր պատմա-քաղաքական համակցման որոշ խնդիրների պարզաբանման համար կարևոր պատմագիտական նշանակություն ունեն Մ. Թաղիադյանի[4], Մ. Ուղուրլյանի[5], Հ. Տեր-Հովհանյանցի[6], Ս. Տեր-Ավետիսյանի[7], Լեոյի[8] և այլոց կողմից կատարված հիմնարար ուսումնասիրությունները:

Ատենախոսության մեջ արծարծվող հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են պրոֆ. Վ. Բայբուրդյանի կողմից՝ Իրանի 17-18-րդ դարերի պատմության բազմաբնույթ հարցադրումներին նվիրված գիտական հիմնարար ուսումնասիրություններն ու աշխատությունները[9]:

---

հեղինակը կանգ է առնում Կարմելյանների քարոզչական կայանների գործունեության վրա առանձին-առանձին (Սպահան, Հորմուզ, Շիրազ, Նոր Ջուղա, Խարք և այլն):

Թեև աշխատությունը վերնագրված է «Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում», սակայն հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի տեղեկությունների: Եվ քանի որ այն ընդգրկում է տվյալների լայն շրջանակ, ուստի, սույն աշխատությունը կարելի է դիտել նաև որպես սկզբնաղբյուր ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի պատմության համար: «Կարմելյանների տարեգրությունը Պարսկաստանում և պապական քարոզչությունը 17-18-րդ դարերում» աշխատությունն ունի նաև հավելվածներ, որոնք արժեքավոր սկզբնաղբյուր են, օրինակ, Հռոմի պապերին հղած պարսից շահերի պարսկերեն նամակների բնօրինակները, Հռոմի պապերի նամակները՝ ուղղված պարսից շահերին, այլ նամակներ, պարսից շահերի, Կարմելյան միաբանության հիմնադիրների, առաջնորդների, կարդինալների, պապերի նկարները և այլն:

Ուսումնասիրվող սկզբնաղբյուրը բազմակողմանի հետազոտության արժանի առարկա է, քանի որ այն, բացի Իրանի պատմության զանազան հարցերից, միաժամանակ տեղեկացնում է նաև այլ երկրների պատմության մասին, հաղորդում շատ տվյալներ, որոնք բացակայում են միևնույն դարաշրջանի հայ և օտար պատմիչների երկերում:

[1] **Krusinski J. T.**, The history of the late revolutions of Persia, v. I and II, N. Y., 1973, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633,1636 и 1639гг., составленное секретарем посольства **Адамом Олеарием**, М., 1870.

[2] **Մատենադարանի պարսկերեն վավերագրերը**. հրովարտակներ, պրակ երկրորդ (1601-1650), Ե., 1959, **Մատենադարանի պարսկերեն վավերագրերը**. հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), Ե., 2005:

[3] **Դավրիժեցի Ա.**, Գիրք պատմութեանց, Ե., 1990:

«Կարմելյանների տարեգրության» մեջ տեղ գտած շատ փաստեր համապատասխանում են Առաքել Դավրիժեցու «Պատմությանը»՝ ժամանակագրական այդ ճշգրիտ վավերագրությանը, թեև կան փաստեր, որ բացակայում են մեկում և լրացվում մյուսով: Համեմատելով «Կարմելյանների տարեգրությունն» ու Դավրիժեցու «Պատմությունը»՝ կարևորվում է այն փաստը, որ հեղինակները, լինելով ականատեսներ, օգտագործել են տվյալ ժամանակի վավերագրերն ու ժամանակագիրների գործերը: Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է առանձնահատուկ քննադատական-վերլուծական վերաբերմունք ցուցաբերել՝ հնարավորության սահմաններում ճշտելով փաստերն ու դրանք ներկայացնել անաղարտ վիճակում:

[4] **Դարանաղցի Գ.** (Կամախեցի), Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղեմ, 1915, **Ջուղայեցի Խ.**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:



---

[1] **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի և նրա հարակից վանքերի, Ե., 2003:

[2] **Ալիշան Ղ.**, Սիսական, տեղագրութիւն Սիսնեաց աշխարհի, Վենետիկ, ի Մխիթարաց Վանս, ի Ս. Ղազար, 1893, **Ալիշան Ղ.**, Հայ-Վենետ կամ Յարընչութիւնք Հայոց եւ Վենետաց Ի ԺԳ-Դ եւ Ի ԺԵ-Զ դարս, Վենետիկ, 1896, **Ալիշան Ղ.**, Հայապատում,Վենետիկ - Ս. Ղազար, 1901:

[3] **Օրմանեան Մ.**, Ազգապատում, մասն Բ., ԿՊ, 1914, Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, ԿՊ, 1911, **Орманіан М.**, Армянская церковь., М., 1913.

[4] **Թաղիադյան Մ.**, Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846:

[5] **Ուղուրլեան Մ.**,Պատմութիւն Հայոց գաղթականութեան եի շինութեան եկեղեցիոյ նոցա ի Լիվոռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891:

[6] **Տէր Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա., Նոր Ջուղա, 1880, **Տէր Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ., Նոր Ջուղա, 1881 :

[7] **Тер-Аветисян С. В.**, Город Джуга, материалы по истории торговых сношений джульфинских купцов XV-XVII вв., Тбилиси, 1937.

[8] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. III, գիրք առաջին, Ե., 1969, հ. V, Ե. , 1986:

[9] **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Ե., 1964, N 9, **Байбуртян В.**, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Е., 1969, **Բայբուրդյան Վ.**, Իրանն այսօր, Ե., 1999, **Բայբուրդյան Վ.** , Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996, **Բայբուրդյան Վ.**, Հայաստանի ազատագրման խնդիրը և ջուղայահայ առևտրական բուրժուազիան XVI–XVII դարերում, XVI–XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու) Ե., 1989, **Байбуртян В.**, Посредническая роль новоджульфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в., ''Краткие сообщения Института Народов Азии АН СССР'', 1964, N0 77, **Բայբուրդյան Վ.**,Նոր Ջուղայի վաճառականությունը և արևմտաեվրոպական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում, Պատմա-բանասիրական հանդես, Ե.,1966, N0 3(34), **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղայի հայ գաղթօջախը, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, **Բայբուրդյան Վ.**, Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (XVI-XVII դարեր), Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, N0 9, **Baibourtian V.**, International Trade and the Armenian Merchants

Ներկայացված ատենախոսության հարցադրումների մեկնաբանման համար զգալի նպաստ են բերել Մ. Զուլալյանի[1], Ա. Աբրահամյանի[2], Տ. Աբգարյանցի[3], Հ. Փափազյանի[4], Ա. Հովհաննիսյանի[5], Վ. Հակոբյանի[6], Հ. Աճեմյանի[7], Վ. Ղուկասյանի[8], Ա. Զամինյանի[9], Լ. Մինասյանի[10], Լ. Դանեղյանի[11], Շ. Խաչիկյանի[12] և այլոց աշխատություններն ու հոդվածները, որոնք ծանրակշիռ ներդրում են 17-18-րդ դարերի Իրանի և իրանահայ գաղթօջախի պատմությանն առնչվող խնդիրների լուսաբանման համար: Արժեքավոր են նաև ռուս և օտար

---

in the Seventeenth Century, New Delhi, 2004, **Բայբուրդյան Վ.**, Իրանի պատմություն, Ե., 2005, **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղա, Ե., 2007:

[1] **Զուլալյան Մ.** Կ, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Հ. Ա, Քաղաքական պատմություն, Ե., 1990, **Зулалян М. К.**, Армения в первой половине XVI в., М., 1971, **Զուլալյան Մ.**, 13-18-րդ դարերի եվրոպացի հեղինակների հայերի ու Հայաստանի մասին աշխատությունների նշանակությունը հայոց պատմության ուսումնասիրման համար (Անտոնիո դե Գուվեա), Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, զեկուցումների ժողովածու, Ե., 2004, **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության հարցերը իտալացի դիվանագետ Պիետրո դելլա Վալեի աշխատություններում, Ակադեմիկոս Նիկողայոս Մառ, Ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Ե., 2005:

[2] **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1964:

[3] **Աբգարեանց Տ.**, Նոր-Ջուղայի դպրոցները, Նոր-Ջուղա, 1914:

[4] **Փափազյան Հ.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, N 3, Ե., 1956, **Փափազյան Հ.**, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, N 8, Ե., 1955, **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար), Լրաբեր հասարակական գիտությունների,1(409), հունվար, Ե., 1977:

[5] **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Ե., 1959:

[6] **Հակոբյան Վ.** , Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Ե., 1956:

[7] **Աճեմյան Հ.**, Նոր–Ջուղայի հայոց գերեզմանատան լատիներէն հին տապանագիրերը, Բազմավէպ, յունուար-յունիս, թիւ 1-6, հ. ՃԲ, Վենետիկ-Ս. Ղազար, 1944:

[8] **Chougassian V.**, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the seventeenth century, Atlanta, Georgia, 1998.

[9] **Զամինյան Ա.**, Հայոց եկեղեցու պատմություն, Բ մասն, Նոր Նախիջևան, 1909:

[10] **Մինասեան Լ.**, Դիւան Ն. Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1900, Ն. Ջ., 1976, **Մինասեան Լ.**, Դիւան Ն. Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1960, Ն. Ջ., 1983, **Մինասյան Լ.**, Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Ն. Ջ., 1983:

[11] **Դանեղյան Լ. Գ.**, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978, **Դանեղյան Լ.**, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IV, Իրան, Ե., 1969, **Данегян Л.**, Политика сефевидов по отношению к армянским колониям в Иране в первой половине XVII в., Арабские страны, Турция, Иран, Афганистан, история, экономика, М., 1973.

[12] **Խաչիկյան Շ.**, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Ե., 1988:



հեղինակների մի շարք աշխատություններ[1]: Վերը նշված աշխատությունների մեջ ներկայացված հարցադրումների քննարկման ընթացքում մեր կողմից դիտարկվել են և պարսից պատմագիրների ու պատմաբանների՝ Իսքանդար-բեկ Թորքեմանի, Նասրոլլա Ֆալասֆիի, Լոթֆալլա Հոնարֆարի, Աբդոլազիմ Ռեզայիի, Մարիամ Միրահմադիի և այլոց ուսումնասիրություններում արտահայտված տեսակետները[2]:

## 9. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանված են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից (ընդամենը համակարգչային շարվածքի 133 էջ):

**Ներածության** մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակի և խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը:

---

[1] **Босворт К.**, Мусульманские династии, М., 1971, **Васильев Л.**, История Востока, т. I, М., 2003, Persia by Brigadier-General, sir **Percy Sykes**, Oxford, 1922, **Sykes P.**, A history of Persia, v. II, London, 1951, **William S. Haas**, Iran, N. York, 1946, **Иванов М.**, Очерк Истории Ирана, М., 1952, **Wilber D.**, Iran, Past and Present, New Jersey, 1950, **Беляев Е.**, Иран в средние века, М., 1941, **Бартольд В.**, Иран, исторический обзор, Ташкент, 1926, **Лозинский С.**, История Папства, М., 1986, **Шейнман М.**, Ватикан и католицизм на службе международной реакции, М., 1954, **Шейнман М.**, Краткие очерки истории папства, М., 1952.

[2] **Сайид Али Муджани,** Иран, Тегеран, 2002, **Armajani Y.**, Middle East, Past and Present, Prentice-Hall, Inc., Englewood Cliffs, 1970.

**اسکندر بیک ترکمان** (منشی)، تاریخ عالم آرای عبا سی، جلد ۱، تهران، ۱۳۳۴.

تاریخ ایران، حوره صفویان (پژوهش از دانشگاه کمبریج)، تهران، ۱۳۸۰.

دکتر **مر یم میرلحمدی**، دین و دولت در عصر صفوی، تهران، ۱۳۶۹.

دکتر **لطف‌الله هنرفر**، آشنایی با شهر تاریخی اصفهان، اصفهان، ۱۳۷۳.

**رلخر سیوری**، ایران عصر صفوی، تهران، ۱۳۸۰.

**نصرالله فلسفی**، زندگانی شاه عباس اول، جلد ۱-۲، تهران، ۱۳۷۱.

**نصرالله فلسفی**، زندگانی شاه عباس اول، جلد۳، تهران، ۱۳۷۱.

**عبدالعظیم رضایی**، تاریخ ده هزار ساله ایران، جلد سوم تهران، ۱۳۷۳.

**Առաջին գլուխը** կրում է *«ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԸ ՇԱՀ ԱԲԲԱՍ Ա-Ի ՕՐՈՔ»* խորագիրը:

Սույն գլուխը բաղկացած է երկու ենթագլխից. **«Սեֆյան շահ Աբբաս Ա-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Իրանա-եվրոպական բանակցային գործընթացն ու կաթոլիկ քարոզչությունը»** և **«Կարմելյան միաբանությունն ու նրա հետաքրքրություններն Իրանի նկատմամբ: Իրան ներթափանցման սկիզբը»**:

**Առաջին ենթագլխում** հեղինակն անդրադառնում է Իրանի մեծագույն տիրակալներից մեկի՝ շահ Աբբաս Ա-ի վարած ներքին ու արտաքին քաղաքականությանը:

Ատենախոսը հիմնավորում է, որ 16 և 17-րդ դարերի առաջին կեսի արևելյան տարածաշրջանի երկու խոշոր պետությունների՝ Իրանի և Օսմանյան կայսրության միջև ընթացող անընդմեջ ռազմական խոշորածավալ ընդհարումների բուն նպատակը ոչ միայն գերիշխող դիրքի գրավումն էր, այլև՝ առևտրական խոշոր տարանցիկ ուղիներին, առավելապես «մետաքսի ճանապարհին» տիրելը: Օսմանյան Թուրքիայի աշխարհաքաղաքական և տնտեսական գերիշխանության նկրտումները թեև ունեին ընդհանրություններ Սեֆյան Իրանի նույնօրինակ ձգտումների հետ, սակայն և որոշակի տարբերակմամբ. եթե Թուրքիան ուներ Եվրոպան գրավելու հեռահար ծրագիր և գործում էր տարած հաղթանակների վառ հուշերով, ապա Իրանում նորաստեղծ Սեֆյան պետության գահակալ շահ Աբբաս Ա-ն իր նպատակին հասնելու համար ակտիվ քայլեր էր ձեռնարկում ընդհանուր թշնամու դեմ՝ եվրոպական գերտերությունների հետ դաշնակցային մերձեցման համար: Այստեղ կարևորվում է հատկապես այն հանգամանքը, որ պարսից շահ Աբբաս Ա-ն, առաջարկելով դաշնակցային համախմբում եվրոպական (կաթոլիկ) պետություններին, պատրաստակամություն էր հայտնում նաև «եվրոպական առևտրականների ու քարոզիչների առջև բացելու Իրանի հյուրընկալ դռները՝ հատկացնելով նրանց ամեն տեսակի պաշտպանություն, առանց որևէ խտրության նրանց և տեղացիների միջև»[1]:

Ակնկալելով Եվրոպայի հետ հետագա հարաբերությունների խորացում և սերտացում, շահ Աբբաս Ա-ն 1599թ. կատարում է աննախադեպ քայլ՝

[1] **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Ե., 1959, էջ 112:



հայտարարելով Իրանում քրիստոնեության դավանման ազատության մասին: Տեղեկացնելով այդ մասին Կղեմես VIII պապին՝ նա առաջարկում է Իրան ուղարկել մշտական ներկայացուցչություն[1]: Օգտվելով պատեհ առիթից և առաջարկից՝ պապը 1604թ. Սպահան է ուղարկում Պող Սայմընին՝ բոկոտն Կարմելյան քահանաներից կազմված խմբով, որին տրված հրահանգում ենթադրվում էր գործերի շուտափույթ ավարտ և ետդարձ, որը, սակայն, իրականանում է միայն քառասուն տարի անց[2]:

Աշխարհա-քաղաքական նոր հարցադրումներից բխող խնդիրների լուծմանը կարող էր նպաստել հատկապես եվրոպական պետությունների հետ հարաբերությունների ակտիվացումն ու աջակցության ապահովումը, որի համար Սեֆյան տիրակալին անհրաժեշտ էին փորձառու, բանիմաց, համաշխարհային շուկայական տարածքներին ու գործավարույթներին քաջածանոթ անձինք, որոնք լավ գիտեին նաև Եվրոպան, իսկ նույն եվրոպացիները ճանաչում և ընդունում էին նրանց: Այդպիսիք արդեն իսկ գտնվում էին հեռատես շահ Աբբաս Ա-ի տեսադաշտում. Հայաստանի, մասնավորապես, Իրանի սահմանակից Երևանի, Գողթն, Նախիջևան և Երնջակ գավառների բնակչությունը և տարածքի կենտրոնը հանդիսացող Ջուղա ավանը՝ հայտնի վաճառականությամբ և արհեստավորների կենտրոնացմամբ: Ահա այս հայ խոջայական դասն էլ պետք է ծառայեր շահի հեռագնա նպատակների իրականացմանը: Առևտրի և դրանից գանձվող շահույթի ուղղորդումը դեպի Իրան և շահական գանձարան կենսական նշանակություն ունեցող խնդիր էր շահ Աբբասի Ա-ի համար: Նպատակ, որին հասնելու համար Աբբաս Ա-ն դրսևորում էր իր դիվանագիտական կարողությունները՝ քայլ առ քայլ հայ մեծահարուստ առևտրականների՝ խոջաների հետ ստեղծելով «դրացի» և «բարեկամական» հարաբերություններ:

[1] **A Chronicle of the Carmelites** in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, London, 1939, v. I, p. 66.
[2] **Նույն տեղում**, էջ 107:

**Երկրորդ ենթագլուխը** նվիրված է Կարմելյան միաբանության՝ Իրանի նկատմամբ ունեցած հետաքրքրություններին ու ներթափանցմանը:

Այստեղ արձանագրվում է այն փաստը, որ օգտվելով Իրանի ծայրաստիճան կախյալ վիճակից և եվրոպական պետությունների ռազմական դաշինքից ընդդեմ Օսմանյան Թուրքիայի լայնածավալ սպառնալիքի, Հռոմը, ի դեմս Կարմելյանների, կարողացավ ոչ միայն ստանձնել բանակցային առաջատարությունը, այլև կաթոլիկ քարոզիչների դեսպանական առաքելություններն օգտագործել՝ Իրանում նրանց հիմնվելու և հետագայում քարոզչական խոշոր կենտրոններ ստեղծելու հեռահար նպատակի իրականացման համար:

Վերլուծվում է «Կարմելյանների տարեգրության» մեջ տեղ գտած շահ Աբբաս Ա-ի մոտ ծառայության անցած անգլիացի Էնթոնի և Ռոբերտ Շըրլի եղբայրների գործունեությունը: Ատենախոսը հետևություն է անում, որ Կղեմես VIII պապի կողմից շահ Աբբաս Ա-ի մոտ Կարմելյան միաբաններին ուղարկելն այն հիմնաքարն էր, որով կայանում էր հակաթուրքական եվրոպական ռազմա-քաղաքական դաշնակցության մերձեցումը Իրանի հետ: Իրականություն կդառնար նաև Սեֆյան տիրակալի հեռանկարային քաղաքականությունը հակաօսմանյան կոալիցիայի ստեղծման գործում՝ ելնելով նաև տնտեսական շահութաբերության հեռանկարից, որը հետագայում կդառնա երկկողմանի շահարկման հիմնական դրույթը: Միևնույն ժամանակ Կղեմես VIII պապի կողմից Կարմելյաններին տրվել էր ներքին հանձնարարական՝ գրավելու Սեֆյան տիրակալի վստահությունը և այն օգտագործելու առավել արագ առաջնային դիրքեր գրաղեցնելու համար կաթոլիկ առաքելությունների մրցավազքում: Իրանում գտնվող բոլոր ուղղվածության միաբանությունների գործունեությունն իրականացվում էր մեկ հենքի վրա և հետապնդում էր մեկ նպատակ՝ Եվրոպայի (Հռոմի) շահերի գործնական իրականացումն Իրանում անկախ այն բանից, թե քարոզիչները որ պետության ներկայացուցիչներն են:

Եվրոպական պետությունները ձգտում էին առաջին հերթին վերականգնել Եվրոպան Արևելքի հետ կապող միջազգային առևտրական ուղին: Բացի այդ,



եվրոպական պետությունները և, մասնավորապես, Հռոմը ձգտում էին «ընդհանուր թշնամու» դեմ պայքարում ներգրավել իրենց բնական հարևանին՝ Իրանին, որի դերակատարությունը հակաօսմանյան դաշինքում անչափ կարևոր էր: Իսկ կաթոլիկ քարոզիչների միջոցով դեպի Իրան ներթափանցելն ու այնտեղ հաստատվելն ավելին, քան հարմար էր Իրանի վերաբերյալ հսկայական տեղեկատվություն ձեռք բերելու համար:

**Երկրորդ գլուխը՝** *«ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ»*, բաժանված է երկու ենթագլխի. **«Շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանն ըստ «Կարմելյանների տարեգրության»: Հայր Ջոն Թադդեուսի գործունեությունը»** և **«Կարմելյան միաբաններն ու իրանահայ գաղութը: Հայերի հայտնվելն Իրանում և գաղթօջախի հիմնումն ըստ «Կարմելյանների տարեգրության»»:**

**«Շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանն ըստ «Կարմելյանների տարեգրության»: Հայր Ջոն Թադդեուսի գործունեությունը»** ենթագլխում հեղինակն անդրադառնում է Հայր Ջոն Թադդեուսի՝ Իրանի մասին տարաբնույթ հետաքրքիր և մանրամասն տեղեկությունների հաղորդմանը: Ատենախոսը բացահայտում է, որ Կարմելյանների գործունեության միակ նպատակը Իրանի մասին տեղեկություններ հաղորդելը չէր, քանի որ հասարակության մեջ այն տպավորությունն էր ստեղծվել, թե Կարմելյանները գտնվում են Իրանում միայն պապի և շահի միջև նամակագրություն իրականացնելու համար: Այս առիթով հայր Ջ. Թադդեուսը հերքել է իրենց (Կարմելյանների)՝ որպես բացառապես պապի ներկայացուցիչներ լինելը. «Որոշ տգետ ու լպիրշ անձանց աչքերը բացելու համար հայտարարում եմ, որ հիմարություն և խելագարություն է կարծել, թե մեր միաբանությունն Իրանում է միայն պապի և շահի միջև նամակագրության համար»[1]: Մինչդեռ նրանց նպատակներից առաջինը կաթոլիկության տարածումն էր, որի ուղղությամբ Կարմելյանների գործադրած ջանքերը դեռ արդյունք չէին տալիս: Ահա ինչու նա առաջարկում էր բացել ուսումնական հաստատություն, որտեղ կսովորեին տարբեր

[1] "A Chronicle of the Carmelites", v. I, p. 268.

ազգության տղաներ, ապա կուղարկվեին ուսումնասիրության Իտալիա: Այսպիսով, Կարմելյանները, Իրանի մասին տեղեկություններ հաղորդելուց զատ, պետք է ջանքեր գործադրեին նաև բոլոր հնարավոր ձևերով կաթոլիկություն տարածելու:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում** փորձ է արվում ուսումնասիրել իրանահայ գաղութի վերաբերյալ Կարմելյանների հաղորդած տեղեկությունները: Կարմելյանների հաղորդումներն՝ իրենց կողմնակալ մոտեցումներով և մեկնաբանություններով հանդերձ, ունեն պատմա-աղբյուրագիտական որոշակի արժեք 17-18-րդ դարերի իրանահայ գաղութի պատմության որոշ էջերի լուսաբանման համար:

Իրանահայ գաղութը կարող էր դառնալ միջանկյալ հենակետ, իսկ գոյություն ունեցող կրոնական խմորումները՝ հենք հանդիսանալ Կարմելյան միաբանների համար: Հայկական միջավայրում 14-15-րդ դարերից սկսած գործում էին բազմաթիվ միաբանություններ (Հիսուսյան, Ֆրանցիսկյան, Դոմինիկյան, Ավգուստինյան և այլն), որոնց հետ շփումներն արդեն տվել էին իրենց առաջին «դրական» արդյունքները՝ գաղափարական կողմնորոշում հաղորդելով որոշ հայ հոգևորական գործիչների և եվրոպական առևտրի ոլորտում հայտնի մեծահարուստ վաճառականների:

Համոզվելով, որ կաթոլիկության տարածումն արժանանում է շիա հոգևորականության և շահական կառավարության բացահայտ հակահարվածին, Կարմելյանները ստիպված էին իրենց գործունեությունը ծավալել Իրանի քրիստոնյա բնակչության և, մասնավորապես, իրանահայության շրջանում: Այդ իսկ պատճառով էլ «Հավատի միաբանությունը» կաթոլիկ քարոզիչներին տրված իր ցուցումներում առանձնակի կարևորում էր քարոզչական գործունեությունն իրանահայության շրջանում[1]: Ահա թե ինչու ժամանելով Սպահան՝ Կարմելյանները Հռոմ հղած իրենց զեկուցագրերում հարկ էին համարել

[1] "A Chronicle of the Carmelites", v. I, p. 191, 197-198:



մանրամասն զեկուցել Սեֆյան Իրանում հայերի ունեցած դերի ու դիրքի մասին[1]: Այդ փաստը հաստատում է հենց Հռոմի կողմից քարոզիչներին հանձնարարված հրահանգներից մեկը, որը վերնագրված է. «Հայերի հետ վարվելու ձևերը»: Այստեղ մանրամասն հանձնարարականներ էին տրվում քարոզիչներին իրանահայության շրջանում աշխատելու ձևերի ու մեթոդների վերաբերյալ[2]:

Իրանի քրիստոնյա բնակչության մեծամասնություն կազմող հայերի շրջանում կաթոլիկ քարոզչության տարածումը թեև չէր հանդիպում մահմեդական պետության կտրուկ հակազդեցությանը, սակայն չէր էլ խրախուսվում[3]: Իրենք՝ քարոզիչները ևս, գիտակցում էին, որ իրանահայերը շահի հպատակներն են, և նրանց կաթոլիկացումը ևս կարող է դիտվել որպես Իրանի դեմ ուղղված քայլ:

Միաժամանակ ներկայացվում է Կարմելյանների գործունեության որոշ կարևոր բնագավառներ՝ թարգմանչական լայնածավալ գործն ու կաթոլիկ դպրոցների հիմնումը, երեխաների ընդգրկումն այդ դպրոցներում և նրանց դաստիարակումը՝ կաթոլիկության ոգուն համապատասխան:

Լուսաբանվում է նաև Էջմիածնի վանքի տեղափոխման՝ շահի մտադրության մասին փաստը համաձայն «Կարմելյանների տարեգրության»:

**Երրորդ գլուխը** վերնագրված է *«ԿԱՐՄԵԼՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍ 18-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ»:*

Այն բաղկացած է երկու ենթագլխից. «**Շահ Աբբաս Ա-ի հետնորդների (Սաֆի Ա, Աբբաս Բ, Սուլեյման Ա (Սաֆի Բ), Սուլթան Հուսեյն) գործունեությունն ըստ «Կարմելյանների տարեգրության»**» և «**Կարմելյանների գործունեության ավարտն Իրանում**»:

**Առաջին ենթագլխում** քննության են առնվել շահ Աբբաս Ա-ի հետնորդների գործունեությունը, այս ժամանակահատվածում ջուղահայերի ու Կարմելյանների հարաբերությունները և այլն: Ամփոփելով Կարմելյանների գործունեության

[1] "A Chronicle of the Carmelites", v. I, p. 155-157.
[2] **Байбуртян В.**, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Е., 1969, стр. 124-125.
[3] Բայբուրդյան Ա., Կարմելյանների միաբանության միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում (XVII դ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 11 (551), Ե., 1988, նոյեմբեր, էջ 53, **Բայբուրդյան Վ. Ա.**, Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, N 9, էջ 39-40:

արդյունքները 17-րդ դարի ողջ ընթացքում, ատենախոսն արձանագրում է, որ պապական քարոզչությունը մեծ նվաճումներ ձեռք չբերեց Իրանում: Պարսից շահերը, բարյացկամություն դրսևորելով Իրան ժամանած կրոնավորների նկատմամբ, միևնույն ժամանակ բավականին հետևողական էին իրենց վարած ներքին ու արտաքին քաղաքականության մեջ և հեռատես: Ուստի, Կարմելյան կրոնավորներից քչերը կարողացան հաջող քարոզչական գործունեություն ծավալել:

**Երկրորդ ենթագլուխը** նվիրված է Կարմելյանների գործունեության ավարտին: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է քարոզիչների անհաջողության պատճառները՝ միաժամանակ նրանց գործունեության մեջ նկատելով դրական կողմեր:

**Եզրակացության** մեջ հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական դրույթները:

1. Կաթոլիկ եկեղեցին, հանդիսանալով դեպի Իրան եվրոպական պետությունների ներթափանցման առաջամարտիկներից, կոչված էր հող նախապատրաստելու Եվրոպական կապիտալի և քաղաքական շրջանների հետագա ներթափանցման համար, իսկ Կարմելյան միաբանությունը դարձավ պապության քաղաքական նպատակների իրականացման միջոց:
2. Կարմելյան միաբանների ներթափանցումն Իրան իրականացվեց Իրանի և Հռոմի քաղաքական ու տնտեսական մերձեցման հեռանկարով և սպասելիքներով: Շահ Աբբաս Ա-ն, Եվրոպայի հետ հետագա հարաբերությունների խորացման և սերտացման նպատակով կատարելով աննախադեպ քայլ (հայտարարելով Իրանում քրիստոնեության դավանման ազատության մասին)՝ առաջարկում է Իրան ուղարկել մշտական ներկայացուցչություն, որը համընկնում է Հռոմի Կղեմես VIII պապի նպատակների հետ, որով և իրականանում է Կարմելյան քահանաների մուտքն Իրան:



3. Նկատի ունենալով իրենց հետաքրքրություններն ու շահերը, պարսից կառավարող շրջանները Իրանի հյուրընկալ դռները պատրաստակամորեն բացում էին Կարմելյան հայրերի և, ընդհանրապես, կաթոլիկ այլ քարոզիչների ու առևտրականների առջև:
4. Իրան ժամանած կրոնավոր քարոզիչների ընտրությունը պատահականորեն չէր կատարվում, քանի որ նրանց առջև դրված էին լուրջ խնդիրներ՝ հավաստի տեղեկություններ հաղորդել երկրի տնտեսական, քաղաքական իրավիճակների, օտարերկրյա պետությունների հետ՝ Իրանի ունեցած հարաբերությունների, պարսից արքունիքի մասին և այլն: Հարկ եղած դեպքում Կարմելյանների՝ Իրան ուղարկված առանձին խմբերում ընդգրկվում էին նաև տարբեր մասնագիտությունների տեր, աշխարհիկ մարդիկ: Այսպես, օրինակ, արագոնացի Ֆրանցիսկո Ռիոդոլիդը Կղեմես VIII-ի հանձնարարականով մեկնել էր Իրան, որպեսզի ճշտեր, թե արդյոք որքանով է նպատակահարմար ռազմական գործիչների ուղարկումն Իրան՝ թուրքերի դեմ կռվող լավ զինվորներ մարզելու համար:
5. Պարսից շահերին ու Հռոմի պապերին հատկապես մերձեցնում էր Օսմանյան կայսրության դեմ տարածաշրջանում հզոր դաշնակից ունենալու և միասնական հաղթանակ տանելու գաղափարը: Սակայն շահ Աբբաս Ա-ի հետնորդներն ըմբռնեցին, որ Վատիկանն ամենևին էլ մտադիր չէ իրագործել այն, և «կրակից շագանակ հանելու» դերն է միայն հատկացրել իրենց, ուստի հրաժարվեցին այդ գաղափարից: Այնուամենայնիվ, քարոզիչների հաղորդած տեղեկությունների միջոցով Հռոմը, ինչպես նաև եվրոպական այլ տերություններ հնարավորություն էին ստանում ճշգրտել իրենց ծրագրերը, իրականացնել մտադրությունները կամ կանխել դրանք: Այսպես, օրինակ, Պ. Սայմընի հակաթուրքական դաշինքին վերաբերող բազմաթիվ նամակներից մեկում

քարոզիչը հաղորդում է շահ Աբբաս Ա-ի հզորության և միայնակ օսմանցիներին կործանելու ունակության մասին և կարևորում մտերմության հաստատումը շահի հետ: Կամ, օրինակ, հայտնում է տեսակետ, որ Օսմանյան Թուրքիային հեշտ կլինի կործանել, քանի որ բոլոր քրիստոնյաները պատրաստ են աջակցելու և այլն:

6. Իրանի և՛ կառավարող շրջանները, և՛ ժողովուրդը, թեև արտաքուստ ցուցաբերում էին որոշակի բարյացկամ վերաբերմունք Իրան ժամանած և հաստատված կրոնավորների նկատմամբ, այնուամենայնիվ, ներքուստ որոշակի հակակրանք ունեին նրանց հանդեպ և, հարկ եղած դեպքում, բացահայտորեն արտահայտում էին այն: Կարմելյան միաբանների ու պարսից շահերի միջև հաստատված հարաբերությունները պայմանավորված էին նրանց իսկ կենսական շահերով: Այսպես, օրինակ, հայտնի է, որ պարսից շահերն ամեն գնով ցանկանում էին հայերին զերծ պահել եվրոպական պետությունների և, մասնավորապես, կաթոլիկ Հռոմի ազդեցությունից: Նրանք գիտակցում էին, որ եթե հայ լուսավորչական եկեղեցին Հռոմին ենթարկվի, ապա իրենք կզրկվեն երկրի սոցիալ-տնտեսական կյանքում մեծ դեր խաղացող իրանահայերից, հատկապես ջուղահայերից: Սակայն ստիպված էին թույլ տալ քարոզիչների գործունեությունն Իրանում, քանի որ նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքը կհանգեցներ Իրանի համար անչափ կարևոր արտաքին առևտրի հիմքերի խախտմանը: Ինչ վերաբերում է կաթոլիկ քարոզիչներին, ապա վերջիններս պետք է զգուշորեն գործեին, որպեսզի առիթ չտային Իրանից իրենց վտարման:

7. Կարմելյանների, ինչպես նաև շատ այլ միաբանությունների հայտնվելն Իրանում անմիջականորեն պայմանավորված էր արևմտաեվրոպական երկրների գաղութարարական տարածապաշտությամբ, իսկ



քարոզչությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ներթափանցման միջոց այդ քաղաքականության իրականացման համար:

8. Կարմելյանների գործունեությունն Իրանում չի կարելի միանշանակորեն դիտել որպես բացասական երևույթ: Քարոզիչների հարուստ գիտելիքների փոխանցումը տեղացի ժողովրդին, լեզուների իմացությունը և, հատկապես, թարգմանչական գործունեությունը, որը նպաստեց Եվրոպայի գիտական, գրական, դավանաբանական, փիլիսոփայական մտքի կարևորագույն նմուշներին ծանոթանալուն, խոսում է նրանց գործունեության նաև դրական կողմերի մասին:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Կարմելյան միաբանության ներթափանցումն Իրան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հ. XXIII, Ե., 2004, էջ 418-429:
2. Կարմելյանների գործունեությունը Սեֆյան շահեր Աբբաս Երկրորդի, Սուլեյմանի և Սուլթան Հուսեյնի կառավարման տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հ. XXIV, Ե., 2005, էջ 353-365:
3. Կարմելյանների Իրանում բնակություն հաստատելու շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, II, Ե., 2005, էջ 44-48:
4. Կարմելյանների և ջուղահայերի հարաբերությունները, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, III, Ե., 2006, էջ 25-28:
5. Հայերին «դարձի բերելու» Կարմելյան միաբանների ձգտումները Սեֆյան Իրանում, Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում (Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների առաջին գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), «Գլաձոր» կառավարման համալսարան, Ե., 2004, էջ 126-134:
6. Իրանը Շահ-Աբաս Առաջինի օրոք (Իրանի նկատմամբ Վատիկանի հավակնությունների դրդապատճառները), Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները Հայաստանում (Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների երկրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու), «Գլաձոր» կառավարման համալսարան, Ե., 2005, էջ 146-152:



**МАРТОЯН ТЕГМИНЕ РУБИКОВНА**

**"ЛЕТОПИСЬ КАРМЕЛИТОВ" КАК ИСТОЧНИК ИСТОРИИ ИРАНА 17-18 ВВ**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02.—"Всеобщая история"

Защита состоится 6-го декабря 2007 года в $15^{00}$ часов на заседании специализированного Совета 006 ВАК действующего в институте Востоковедения НАН РА (375019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24 г)

## Р Е З Ю М Е

Представленная диссертация на тему ""ЛЕТОПИСЬ КАРМЕЛИТОВ" КАК ИСТОЧНИК ИСТОРИИ ИРАНА 17-18 ВВ" является результатом источниковедческого исследования, первоисточником для которого послужило двухтомное собрание актов "A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939" ("Летопись Кармелитов в Персии и папская миссия в 17-18 вв.", т. I, II, Лондон, 1939).

Документальный материал этой летописи был подвергнут историковедческому сопоставлению и сравнительному анализу.

Этому периоду посвящены многочисленные и многообразные фундаментальные источниковедческие исследования. Частным вопросом обсуждения является проблема выявления отношений между европейским (католическим) миром и Ираном.

Данная диссертация является попыткой исследования истинных причин, процессов, а также далеко идущих целей и последствий активных действий католических миссий, в частности, кармелитской.

Основными источниками изучения предложенного вопроса являются дневниковые записи, относящиеся к деятельности

Кармелитов, письма-отчеты, направленные в Ватикан, а также аналитические исследования и другие документы. Их новая, более современная разработка при помощи дополнительных источниковедческих данных и специализированных исследований дают возможность переоценить некоторые, еще полностью не освещенные вопросы, касающиеся истории Ирана 17-18 вв, а также пролить свет на существующие в науке точки зрения, что во многом будет способствовать более глубокому изучению истории армянского народа того периода.

Диссертация состоит из введения, трех глав, каждая из которых разделена на подглавы, заключения, списка использованных первоисточников и литературы.

В введении говорится об актуальности диссертационной темы, о целях и задачах, обосновывается теоретическое и практическое значение работы, дается краткий обзор использованных первоисточников и литературы, раскрывается методологическая основа и научная новизна работы.

Первая глава называется "Сефевидский Иран во время царствования шаха Аббаса I", и состоит из двух подглав: "Внутренняя и внешняя политика Сефевидского шаха Аббаса I. Ирано-европейский переговорный процесс и католическая миссия", и "Конгрегация Кармелитов и ее иранские интересы. Начало проникновения в Иран".

В первой подглаве автор описывает некоторые аспекты внутренней и внешней политики одного из величайших правителей Ирана—шаха Аббаса I. Вторая подглава посвящена конгрегации Кармелитов, в частности, их иранским интересам, а также их проникновению в Иран. Здесь отмечается тот факт, что Рим, используя крайнюю зависимость Ирана от европейских государств и военный союз против широкомасштабной угрозы со стороны Османской Турции, при помощи Кармелитов смог не только завоевать первенство в введении переговоров, но и использовать посольства католических миссионеров



для последующего обоснования их в Иране и образования крупных миссионерских центров.

Вторая глава "Деятельность Кармелитов в Иране в первых десятилетиях 17-го века" в свою очередь состоит из двух подглав: первой—"Правление шаха Аббаса I согласно "Летописи Кармелитов". Деятельность отца Джона Таддеуса", и второй—"Кармелиты и ирано-армянская колония. Появление армян в Иране и основание колонии согласно "Летописи Кармелитов"".

В первой подглаве автор представляет разнообразные, интересные и подробные сведения касающиеся Ирана, данные отцом Джоном Таддеусом.

Вторая подглава второй главы посвящена информации, данной Кармелитами об ирано-армянской колонии.

Третья глава "Деятельность Кармелитов в Иране со II половины 17-го века по начало 18-го века" состоит из двух подглав: "Деятельность преемников шаха Аббаса I (Сафи I, Аббас II, Сулейман I (Сафи II), Султан Гусейн) согласно "Летописи Кармелитов", и "Окончание деятельности Кармелитов в Иране".

В первой подглаве рассматривается деятельность преемников шаха Аббаса I, взаимоотношения джульфийских армян с Кармелитами. Вторая подглава посвящена окончанию деятельности Кармелитов. Автор подробно показывает причины их неудачи, в то же время рассматривая некоторые аспекты их деятельности как положительное явление.

В заключении обобщены основные аспекты диссертации, которые могут быть использованы как в исследованиях, посвященных проблемам истории Ирана 17-18 вв., так и в вузовых лекциях по истории армянского народа позднего средневековья.

Основные положения диссертации могут оказаться полезными для историков, востоковедов, арменоведов, специалистов в области международных отношений и т. д.

TEHMINE R. MARTOYAN

# "THE CHRONICLE OF THE CARMELITES" AS A SOURCE OF HISTORY OF THE 17-18-TH CENTURIES OF IRAN